

© Association of Judges of the RA,  
[http://www.judge.am/index.php?option=com\\_content&view=category&layout=blog&id=36&Itemid=60&lang=en](http://www.judge.am/index.php?option=com_content&view=category&layout=blog&id=36&Itemid=60&lang=en). [Translation already published in Collection of judgments of ECHR in Volume 4, 2003.] Permission to re-publish this translation has been granted for the sole purpose of its inclusion in the Court's database HUDOC.

CASE OF SAHIN v. GERMANY - [Armenian Translation] by the Association of Judges of the RA

ՍԱՀԻՆՆ ԸՆԴԴԵՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԳՈՐԾԸ

CASE OF SAHIN v. GERMANY

Դատարանի 2003թ. հունիսի 8-ի

վճիռը

Ստրասբուրգ

## ՓԱՍՏԵՐ

### I Գործի հանգամանքները

11. Դիմողը՝ ծնված 1950թ., իրադարձությունների ժամանակ եղել է Թուրքիայի քաղաքացի: Հետագայում նա ստացել է Գերմանիայի քաղաքացիություն:

12. Դիմողը 1988թ. հունիսի 29-ին արտամուսուրությունից ծնված Գ.-ի հայրն է: 1988թ. հունիսի 15-ով թվագրված փաստաթղթով նա ընդունել է ապագա երեխայի հայրությունը և հետագա՝ 15.08.1988թ. թվագրությամբ փաստաթղթով, ճանաչել է հայրությունը և պարտավորվել հոգալ ծախսերը:

13. Դիմողը երեխայի մորը՝ տիկին Դ.-ին հանդիպել է 1985թ. և 1987թ. տեղափոխվել նրա բնակարան, որտեղ համատեղ ապրել են առնվազն մինչև 1989թ. հուլիսը, իսկ ըստ դիմողի հայտարարության՝ մինչև 1990թ. փետրվար: Ամեն դեպքում, դիմողը՝ շարունակաբար այցելել է երեխային և նրա մորը՝ մինչև 1990թ. փետրվար և 1990թ. հուլիսի վերջից մինչև հոկտեմբեր: 1990թ. նոյեմբերից տիկին Դ.-ն արգելել է երեխայի հետ դիմողի որևէ շփում:

14. 1990թ. դեկտեմբերի 5-ին դիմողը դիմել է Վիսբադենի մարզային դատարան՝ պահանջելով իրեն իրավունք վերապահել տեսակցելու դստերը՝ յուրաքանչյուր կիրակի ժ. 10.00-18.00, իսկ Ջատիկին և տոնական օրերին՝ նաև երկուշաբթի:

15. 1991թ. սեպտեմբերի 5-ին Մարզային դատարանը, հիմք ընդունելով դատաքննության ժամանակ կողմերի, Վիսբադենի Անչափահասների գործերով գրասենյակի հայտարարությունները, ինչպես նաև մի քանի վկաների ցուցմունքները, մերժել է դիմողի պահանջը:

16. Դատարանը, հղում կատարելով Քաղաքացիական օրենսգրքի 1711 հոդվածին, նշել է.

«Դատարանը համոզված է, որ դիմողի ցանկությունը՝ երեխային ակտիվ տեսակցելու հետ կապված, պետք է բավարարվի, եթե միայն դա կլինի ի շահ երեխայի: Տվյալ պարագայում հոր հետ երեխայի անձնական շփումները որևէ դրական արդյունք չեն ունենա, քանի որ երեխայի մայրը՝ խորապես չսիրելով նրա հորը, այնքան մոլեռանդորեն է պայքարում երեխայի ու հոր տեսակցությունների դեմ, որ ստեղծվում է այնպիսի գերլարված հոգեբանական մթնոլորտ, որը, հավանաբար, չափազանց վնասակար կլինի երեխայի համար:

Երեխայի և հոր միջև շփում եղել է մոտ մեկ տարի 9 ամիս՝ երեխայի ծննդից մինչև հոր մեկնելը, ինչը չի կարող համարվել արմատապես կարևոր նշանակություն ունեցող գործոն, որպեսզի վտանգի ենթարկվի երեխայի հոգեկան աշխարհի անդորրը: Երեխայի նկատմամբ հոգ տանող պետական մարմնի աշխատակցի, ինչպես նաև որոշ վկաների ցուցմունքները խոսում են այն մասին, որ երեխայի համար հոր բացակայությունը որևէ հոգեբանական անհանգստություն չի

առաջացրել, որ երեխան շատ խանդավառ, առողջ ու բնականոն զարգացող երեխա է: Այսինքն՝ վկայությունները չեն հաստատել հոր պնդումներն առ այն, որ երեխան իրեն կարոտել է, անընդհատ արտաբերել է նրա անունն այն օրվանից, երբ նրան զրկել են երեխայի հետ տեսակցության իրավունքից:

Քանի որ դատաքննության ժամանակ պարզված ապացույցները չեն վկայում, որ Քաղաքացիական օրենսգրքի 1711 հոդվածի 2-րդ կետի պահանջները պահպանվել են, ուստի Դատարանը կարող է մերժել դիմողի հայցը»:

**17.** 1992թ. մարտի 12-ին դիմողը դիմել է Վիսբադենի շրջանային դատարան:

**18.** 1992թ. մայիսի 12-ին Շրջանային դատարանը երեխայի և հոր միջև շփման կապակցությամբ հոգեբանական փորձաքննության եզրակացություն է պահանջել: 1992թ. հուլիսի 8-ին, փորձագետի հետ զրույցի արդյունքում, հայրը բացարկ է հայտնել նրան՝ մեղադրելով կողմնակալության մեջ: Նա պահանջել է, որպեսզի նշանակվի այնպիսի փորձագետ, որն իր պահանջը չի դիտի կարծրացած գիտական մեթոդների լույսի ներքո, այլ դրանում ավելի խորամուխ կլինի: 1992թ. սեպտեմբերի 9-ին շրջանային դատարանը բացարկը մերժել է՝ պատճառաբանելով, որ փորձագետի՝ 1992թ. օգոստոսի 8-ի եզրակացության մեջ կողմնակալություն չի նկատել, և չկա որևէ հիմք կասկածի տակ դնելու նրա մասնագիտական կարողությունները:

**19.** 1992թ. դեկտեմբերի 17-ին դիմողը խնդրել է շրջանային դատարանին արագացնել լսումները: Նա նաև խնդրել է իր համար շաբաթը մեկ անգամ երեխային տեսակցելու ժամանակավոր կարգ սահմանել, որպեսզի երեխայի մայրը չկարողանա որևէ կերպ խոչընդոտել տեսակցությանը:

**20.** 1992թ. դեկտեմբերի 23-ին շրջանային դատարանը մերժել է տեսակցության ժամանակավոր կարգ սահմանելու վերաբերյալ դիմողի խնդրանքը: Շրջանային դատարանը գտել է, որ դրա անհրաժեշտությունը չի տեսնում, և որ դիմողը կարող է սպասել իր գործի լսումների արդյունքին: Բացի դրանից, տեսակցության ժամանակավոր կարգի սահմանումն անմիջական առնչություն կունենար դատարանի հիմնական վճռի հետ: Եթե դատարանը գտնի, որ դիմողի գլխավոր հայցը ենթակա է մերժման, ապա երեխայի հետ դիմողի ժամանակավոր տեսակցությունները նրա վրա դրական ազդեցություն չեն կարող ունենալ:

**21.** Փորձագետի 1993թ. փետրվարի 25-ով թվագրված եզրակացության համաձայն՝ նա այցելել է դիմողին, երեխային և երեխայի մորը՝ 1992թ. հունիսին, նոյեմբերին, ինչպես նաև 1993թ. փետրվարին: Ինչ վերաբերում է երեխայի հետ հանդիպումներին, ապա փորձագետը հետազոտել է նրա վերաբերմունքը մարդ-

կանց, իրադրության և դիմողի նկատմամբ: Նրանք նաև դիտել են ընտանեկան լուսանկարները, որոնցից ավելի թարմ լուսանկարները երեխան խուսափել է դիտել: Այդ արձագանքն ապացուցել է, որ երեխան իր մեջ զսպել է հոր մասին հիշողությունները: Փորձագետը հանգել է այն եզրակացության, որ երեխայի շփումները հոր հետ, առանց ծնողների միջև հանդուրժողական փոխհարաբերությունների հաստատման, չեն բխի երեխայի շահերից:

**22.** Շրջանային դատարանը, համարելով, որ Մարզային դատարանը բացթողում է կատարել՝ դատարանում չլսելով երեխայի կարծիքը, այնուամենայնիվ, 1993թ. մարտի 8-ի գրությամբ դիմել է փորձագետին՝ եզրակացություն ստանալու այն մասին, թե արդյոք երեխային դատարանում լսելը նրա համար մեծ հոգեբանական լարվածություն չի առաջացնի:

**23.** Փորձագետը՝ 1993թ. մարտի 13-ի պատասխան գրության մեջ նշել է, որ ինքը երեխային անմիջական հարց չի տվել իր հոր մասին: Նա սպասել է, թե ինչպես է արձագանքելու երեխան՝ դիտելով հոր հետ լուսանկարները, որպեսզի պարզի նրա զգացմունքները հոր նկատմամբ, բայց երեխան ամեն կերպ խուսափել է դրանք նայելուց և խուսափել է հոր նկատմամբ որևէ զգացմունք արտահայտելուց: Ըստ փորձագետի կարծիքի՝ նման վարքագիծը վկայում է այն մասին, որ երեխան, ապրելով մոր հետ և լավատեղյակ լինելով հոր հանդեպ մոր վերաբերմունքին, կարող էր տպավորություն ունենալ, թե իր խոսքը վճռորոշ նշանակություն պետք է ունենա, և այդ հոգեվիճակը կարող էր զուգորդվել մեծ մեղքի զգացումով:

**24.** 1993թ. ապրիլի 30-ին դատարանում դիմողը և նրա երեխայի մայրը համաձայնագիր են կնքել առ այն, որ դիմողը կդադարի դատական կարգով հարցի լուծմանը հետամուտ լինելուց, մոր հետ կապված անձնական հանգամանքների մասին հարցումներ կատարելուց և կիրականացնի երեխայի նկատմամբ խնամքի իր իրավունքը՝ ընտանեկան թերապիայի պայմանով: Լսումները դադարեցվել են մինչև այդ թերապիայի ավարտը:

**25.** 1993թ. հունիսի 1-ին դիմողը պահանջել է, որպեսզի վերսկսվեն լսումները, քանի որ երեխայի մայրը չի ապահովել դիմողի կողմից առաջարկված ընտանեկան թերապիան:

**26.** 1993թ. օգոստոսի 25-ին Վիսբադենի շրջանային դատարանը մերժել է դիմողի պահանջը՝ այն հիմնավորելով հետևյալ կերպ.

«Արտամուսնական կապից ծնված երեխայի անձնական շփումը հոր հետ միտված է նրան, որպեսզի ապահովվի հոր մասնակցությունը երեխայի բարեկեցությանը եւ զարգացմանը, ինչպես նաև նրանց միջև բնական կապերի պահպանմանը: Եթե Քաղաքացիական օրենսգրքի 1634

հողվածն անուսնական հարաբերություններում ծնված երեխայի նկատմամբ խնամք չիրականացնող հորը վերապահում է երեխային տեսակցելու իրավունք, ապա Քաղաքացիական օրենսգրքի 1711 հոդվածը նման իրավունք չի վերապահում արտամուսնական կապից ծնված երեխայի հորը: Որպես կանոն, մորն է վերապահված երեխայի հանդեպ հոր հոգածության անհրաժեշտության և դրա ծավալների որոշման հարցը, եթե մայրն է ճանաչվում երեխայի խնամակալ: Այնուամենայնիվ, խնամակալին դատարանը կարող է թույլատրել տեսակցել երեխային, եթե դա բխում է նրա շահերից: Երեխայի հոր ավելի թույլ իրավական կարգավիճակը պայմանավորված է արտամուսնական կապից ծնված երեխայի այլ սոցիալական վիճակով: Քաղաքացիական օրենսգրքի 1711 հոդվածի սահմանադրականության հարցի վերաբերյալ Դաշնային սահմանադրական դատարանի 1971թ. և 1981թ. որոշումներից հետո այդ հարցն այլևս որևէ կասկած չէր առաջացնում: Իրավական տեսանկյունից՝ արտամուսնական կապից ծնված երեխաների մասին օրենսդրությունն ունի անհապաղ բարեփոխման կարիք: Այնուամենայնիվ, մինչ օրս դատարանները ղեկավարվում են գործող 1711 հոդվածով:

Խնամակալության դատարանն է որոշում արտամուսնական կապից ծնված երեխային տեսակցելու հոր իրավունքը, ինչպես նաև այն հարցը, թե արդյո՞ք այդ տեսակցությունները կնպաստեն երեխայի բարեկեցությանը: Բավական չէ միայն այն, որ այդ շփումը համապատասխանի երեխայի շահերին, անհրաժեշտ է, որ այդ շփումը ծառայի երեխայի շահերին: Այդ ամենի հիմքում ընկած է այն գաղափարը, որ հորը պետք է տրամադրել երեխային տեսակցելու իրավունք, քանզի դա նպաստում է երեխայի բնականոն զարգացմանը, անձի ճիշտ ձևավորմանը և լիարժեքության գաղափարի ամրապնդմանը, քանզի այդ շփումները նրան լիարժեք պատկերացումներ են տալիս իր իսկ անձի և իր ծագման մասին: Այսինքն՝ երեխան պետք է ոչ թե մտովի պատկերի իր հոր կերպարը, այլ ունենա նրա մասին իրական պատկերացում և տպավորություններ:

Այն հարցի պատասխանը, թե արդյոք հոր շփումները երեխայի հետ նպաստում են վերջինիս բարեկեցությանը, պարունակվում է հենց հոր վարքագծի մեջ: Շրջանային դատարանը գտել է, որ տվյալ դեպքում հայրը գործում է ամենայն պատասխանատվությամբ, սակայն դատարանը պարտավոր չէ միայն այդ հանգամանքը գնահատելով նրան երեխային տեսակցելու հնարավորություն ընձեռել, եթե ծնողների միջև առկա են այնպիսի խոր կոնֆլիկտներ, որոնց լավատեղյակ է երեխան, և յուրաքանչյուր շփում հոր հետ երեխայի մոտ կարող է առաջացնել տագնապ ու անհանգստություն, ինչը կխաթարի երեխայի բնականոն զարգացումը:

Հոգեբանական փորձաքննության արդյունքների հիման վրա կարելի է ասել, որ տվյալ դեպքում երեխան հանդես է գալիս որպես երկու թշնամական կողմերի միջև միջանկյալ օղակ:

Եթե, ինչպես տվյալ դեպքում, կա վտանգ, որ ծնողների միջև տարածայնությունը կարող է անդրադառնալ երեխայի վրա, ապա, որպեսզի ապացուցվի, որ հոր հետ շփումները երեխայի համար ունենալու են դրական արդյունք, անհրաժեշտ են հատուկ հանգամանքներ: Այնուամենայնիվ, նման հանգամանքներ տվյալ դեպքում առկա չեն: Ապացուցված է, որ կյանքի առաջին երկու տարիները երեխան ապրել է հոր և մոր հետ համատեղ, սակայն այդ տարիները ևս չի են եղել բազմաթիվ կոնֆլիկտներով: Ծնողների միջև տարածայնությունները, որոնք հաճախ կրել

են ազդեցիկ բնույթ, իրենց դրոշմն են թողել երեխայի ձևավորման վրա, եթե նույնիսկ երեխան արդեն չի հիշում դրանց մասին: Այն փաստը, որ երեխան ամեն կերպ զսպում էր բոլոր հիշողությունները հոր հետ շփումների կապակցությամբ, խոսում է այն մասին, որ նա առանձնապես չի ցանկանում խոսել հոր մասին: Այս ամենից ելնելով՝ փորձագետը գտնում է, որ երեխան ներկա իրավիճակի արդյունքում տառապանքներ չի կրում:

Դատարանը գտնում է, որ կարող է լիարժեքորեն հենվել փորձագետի եզրակացության վրա, և որևէ հիմք չի տեսնում դիմողի անվստահության համար:

Դատարանը տեսնելով, որ նշանակված ընտանեկան թերապիան որևէ արդյունք չի տվել, և ծնողները չեն կարողացել կոնֆլիկտները հաղթահարել, միևնույն է, պարտավոր չէ գնահատել, թե տվյալ պարագայում ծնողներից ով է մեղավորը, քանի որ կարևորագույն և վճռորոշ գործոնը երեխայի կարծիքն է: Իսկ տվյալ դեպքի կապակցությամբ արդեն նշվել է, որ ծնողները պարտավոր են երկխոսություն սկսել միմյանց հետ»:

27. Շրջանային դատարանը գտել է, որ պարտավոր չէր հարցնել երեխային հոր նկատմամբ տածած զգացմունքների մասին, քանի որ դա երեխային մեծ հոգեբանական լարվածություն կպատճառեր: Այդ կապակցությամբ, Դատարանը հիշատակում է փորձագետի 1993թ. մարտի 13-ի եզրակացությունը (տես վերը՝ կետ 23):

28. 1993թ. սեպտեմբերի 21-ին դիմողը սահմանադրական գանգատ է ներկայացրել Դաշնային սահմանադրական դատարան, նշելով, որ դատերը տեսակցելու իրավունքից զրկելու փաստը խախտում է իր ծնողական իրավունքը և առաջացնում անհավասարություն: Դաշնային սահմանադրական դատարանը դիմողի դիմումը քննության է ընդունել 1993թ. սեպտեմբերի 29-ին:

1994թ. ապրիլի 26-ին սահմանադրական դատարանին հասցեագրված նամակով դիմողը խնդրել է դատարանին արագացնել որոշման կայացումը: Սահմանադրական դատարանը հայտնել է, որ շատ ավելի վաղ մուտքագրված նմանատիպ հարցի կապակցությամբ որոշումը կայացվելու է 1995թ.1-ին կեսին:

1995թ. նոյեմբերի 26-ին դիմողը գրավոր դիմել է Դաշնային սահմանադրական դատարանի նախագահին՝ բողոքելով, որ իր սահմանադրական գանգատի քննությունը հետաձգվել է մինչև 1996թ. առաջին կեսը: 1996թ. փետրվարի 15-ին գործը քննող դատավորը պատասխանել է, որ, հաշվի առնելով դատարանի գերծանրաբեռնվածությունը, 1995թ. հնարավոր չէ դիմողի գործով որոշում կայացնել: Որոշումը նախատեսվում է կայացնել 1996թ.: Հաշվի առնելով հարցի կարեւորությունը՝ որոշումը պահանջում է մանրակրկիտ նախապատրաստում:

29. 1998թ. դեկտեմբերի 1-ին Դաշնային սահմանադրական դատարանը՝ երեք դատավորի կազմով, մերժել է դիմողի սահմանադրական գանգատը:

## **II. ԳՈՐԾԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ**

### **A. Ներկայումս գործող ընտանեկան օրենսդրությունը**

30. Խնամակալության և տեսակցության վերբերյալ օրենսդրական դրույթներն ամրագրված են Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքում: Դրանք բազմիցս փոփոխման են ենթարկվել, մեծ մասն էլ վերացվել է՝ 1997թ. դեկտեմբերի 16-ին նոր ընտանեկան օրենսդրություն ընդունելու արդյունքում (Դաշնային բյուլետեն, 1997թ., էջ 2942), որն ուժի մեջ է մտել 1998թ. հուլիսի 1-ին:

31. 1626 հոդվածի 1-ին կետը շարադրված է հետևյալ կերպ.

«Չայրը և մայրն իրավունք ու պարտականություն ունեն կատարելու իրենց ծնողական լիազորություններն անչափահաս երեխայի հանդեպ: Ծնողական լիազորությունների մեջ են մտնում խնամակալությունը և երեխայի գույքի նկատմամբ խնամքը»:

32. Փոփոխված 1626 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ արտամուսնական կապից ծնված անչափահաս երեխայի ծնողները համատեղ են իրականացնում խնամակալությունը, եթե հայտարարում են նման մտադրության մասին, կամ եթե ամուսնանում են: Փոփոխված 1684 հոդվածի համաձայն՝ երեխան իրավունք ունի հավասարապես լինելու երկու ծնողների հետ: Բացի դրանից, ծնողներից ոչ մեկն իրավունք չունի դրսևորել այնպիսի վարքագիծ, որը կվնասի երեխայի և մյուս ծնողի փոխհարաբերությունները կամ լուրջ խնդիր կդառնա երեխայի դաստիարակման հարցում: Ընտանեկան հարցերով դատարանները կարող են ավելի հստակ պայմաններ և կարգ սահմանել ծնողների կողմից խնամակալություն իրականացնելու համար, ինչպես նաև երրորդ անձանց հետ փոխհարաբերություններում, դատարանները կարող են նաև կարգադրել ծնողներին իրականացնել այդ պարտավորությունները: Ընտանեկան գործերով դատարանները կարող են նաև սահմանափակել կամ դադարեցնել այդ իրավունքը, եթե այդ են պահանջում երեխայի շահերը: Դա կարող է արվել, իհարկե, ծայրահեղ դեպքերում, երբ խոսքը վերաբերում է երեխային լուրջ վտանգից զերծ պահելուն: Դատարանների վճիռների իրականացման նկատմամբ պատասխանատու են Անչափահասների հարցերով գրասենյակը կամ ընկերակցությունը:

## **Բ. Գործին առնչվող ժամանակահատվածում ընտանեկան օրենսդրությունը**

33. Մինչ ընտանեկան նոր օրենսդրության ուժի մեջ մտնելն արտամուսնությունից ծնված երեխայի խնամակալության հարցը կարգավորող Քաղաքացիական օրենսգրքի համապատասխան հոդվածը շարադրված է հետևյալ կերպ.

### **Հոդված 1634**

«1. Երեխայի նկատմամբ խնամակալություն չիրականացնող ծնողն անձնական շփման իրավունք ունի երեխայի հետ: Խնամակալ ծնողը, ինչպես նաև խնամակալություն չիրականացնող ծնողն իրավունք չունեն միմյանց հարաբերությունների վրա վատ ազդեցություն գործող, ինչպես նաև երեխայի դաստիարակության վրա ազդող արարքներ կատարել:

2. Ընտանեկան գործեր քննող դատարանն իրավունք ունի հստակեցնել երեխայի ծնողների պարտականությունները և որոշակի իրավունքներ վերապահել ինչպես երեխայի ծնողներին, այնպես էլ նրանց՝ երրորդ անձանց հետ փոխհարաբերություններում: Քանի դեռ 1632 հոդվածի 2-րդ կետի հիման վրա որոշում չի կայացվել, ծնողներն իրավունք ունեն այդ ժամանակահատվածում խնամակալությունն իրականացնել հավասարաչափ: Ընտանեկան գործեր քննող դատարանն իրավունք ունի դադարեցնել կամ սահմանափակել իրավունքները, եթե դա են պահանջում երեխայի շահերը:

3. Խնամակալություն չիրականացնող ծնողը երեխայի վիճակի մասին տեղեկատվություն կարող է պահանջել խնամակալ ծնողից՝ այն ծավալով, որը որևէ կերպ չի վնասի երեխային»:

4. Եթե երկու ծնողներն էլ խնամակալ են եւ ապրում են ժամանակավորապես առանձին՝ վերոհիշյալ դրույթները գործում են *mutatis mutandis*»:

1632 հոդվածի 2-րդ կետը վերաբերում է նաև երեխայի՝ երրորդ անձանց հետ փոխհարաբերություններին:

34. Քաղաքացիական օրենսգրքի՝ արտամուսնական կապից ծնված երեխայի խնամակալության ու նրա հետ անարգել շփման խնդիրը կարգավորող համապատասխան դրույթները շարադրված են հետևյալ կերպ.

### **Հոդված 1705**

«Արտամուսնական կապից ծնված անչափահաս երեխայի նկատմամբ խնամքն իրականացվում է մոր կողմից . . .»:

### **Հոդված 1711**

«1. Իր խնամքի տակ երեխա ունեցող անձը պետք է որոշի երեխայի հետ հոր շփման իրավունքը. 1634 հոդվածի 1-ին կետի երկրորդ նախադասությունը կիրառվում է համանմանությամբ:

2. Եթե հոր հետ անձնական շփում ունենալը բխում է երեխայի շահերից, խնամակալության դատարանը կարող է որոշել, որ հայրն ունի անձնական շփման իրավունք: 1634 հոդվածի 2-րդ կետը կիրառվում է համանմանությամբ: Խնամակալության դատարանը կարող է ցանկացած ժամանակ փոխել իր որոշումը:

3. Երեխայի անձնական տվյալների մասին տեղեկատվություն պահանջելու իրավունքն ամրագրված է 1634 հոդվածի 3-րդ կետում:

4. Անհրաժեշտության դեպքում, Անչափահասների հարցերով գրասենյակը միջնորդում է հոր և երեխայի խնամքի իրավունքն իրականացնող անձի միջև»:

### **C. Չվիճարկվող վարույթի մասին օրենքը**

35. Ընտանեկան այլ հարցերով վարույթների նման, Քաղաքացիական օրենսգրքի նախկին՝ 1711 հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ վարույթը կարգավորվել է չվիճարկվող վարույթի մասին օրենքով:

36. Համաձայն այդ օրենքի 12-րդ բաժնի՝ դատարանը, սեփական նախաձեռնությամբ, պետք է ձեռնարկի հետաքննության միջոցներ, որոնք անհրաժեշտ են բացահայտելու գործին առնչվող փաստերը և ձեռք բերելու անհրաժեշտ ապացույցներ:

37. Շփմանն առնչվող վարույթում իրավասու Անչափահասների հարցերով գրասենյակին պետք է լսել մինչև որոշում ընդունելը (49(1) (K) բաժին):

38. Ինչ վերաբերում է խնամակալությանն առնչվող վարույթում ծնողներին լսելուն, 50a (1) բաժինը նախատեսում է, որ դատարանը պետք է ծնողներին լսի երեխայի խնամակալությանը կամ գույքի կառավարմանն առնչվող վարույթներում: Խնամակալությանը վերաբերող հարցերով դատարանը պետք է, որպես կանոն, լսի ծնողներին անձնապես: Հանրային խնամակալության հաստատություններում տեղավորելուն առնչվող գործերով ծնողները պետք է միշտ լսվեն: Համաձայն 50a(2) բաժնի՝ երեխայի նկատմամբ խնամք չիրականացնող ծնողը լսվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ թվում է, որ այդպիսի լսումը հարցի պարզաբանման գործում ներդրում չի ունենա:

### **D. Միավորված ազգերի կազմակերպության Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան**

39. Երեխայի՝ մարդու իրավունքները և այն չափորոշիչները, որոնց պետք է բոլոր պետությունները ձգտեն բոլոր երեխաների համար այդ իրավունքների իրականացումն ապահովելու համար, ամրագրված են Միավորված ազգերի կազմակերպության Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում: Կոնվենցիան

ուժի մեջ է մտել 1990թ. սեպտեմբերի 2-ին և վավերացվել է 191 երկրների կողմից, ներառյալ՝ Գերմանիան:

40. Կոնվենցիան հանգամանորեն պարզաբանում է մարդու այն հիմնարար իրավունքները, որոնք երեխաներն ամենուր, առանց խտրականության, ունեն, այն է՝ կյանքի իրավունքը, լիարժեք զարգացման, վնասակար ազդեցություններից, չարաշահումից և շահագործումից պաշտպանությունը և լիիրավ մասնակցությունն ընտանեկան, մշակութային ու սոցիալական կյանքին: Այն նաև պաշտպանում է երեխայի իրավունքները՝ սահմանելով առողջապահության, կրթության, իրավական, քաղաքացիական և սոցիալական ծառայությունների չափորոշիչները:

41. Կոնվենցիայի մասնակից պետությունները պարտավոր են երեխայի լավագույն շահերի լույսի ներքո զարգացնել եւ ձեռնարկել բոլոր գործողությունները և քաղաքականությունները (հոդված 3): Բացի դրանից, մասնակից պետությունները պետք է երաշխավորեն, որ երեխան չբաժանվի իր ծնողներից՝ նրանց կամքին հակառակ, եթե այդպիսի բաժանումն անհրաժեշտ չէ երեխայի լավագույն շահերի համար, և հարգեն մեկ կամ երկու ծնողից բաժանված երեխայի՝ ծնողներից երկուսի հետ էլ պարբերաբար անձնական հարաբերություններ եւ ուղղակի կապ պահպանելու իրավունքը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա հակասում է երեխայի լավագույն շահերին (հոդված 9):

## **ԻՐԱՎՈՒՆՔԻ ՉԱՐՑԵՐ**

### **I. Նախնական հարցը. Դատարանին ներկայացված գործի շրջանակը**

42. Կառավարությունը դիմողի հուշագրին ի պատասխան ներկայացրած իր լրացուցիչ փաստարկներում հայտնել է, որ դիմողի գանգատներից մի քանիսն անընդունելի են՝ Կոնվենցիայի 35 հոդվածի 1-ին կետի համաձայն ներպետական միջոցները չսպառելու հիմքով: Ինչ վերաբերում է փորձագետի ենթադրյալ կանխակալությանը, Կառավարությունը պնդել է, որ դիմողը հետագայում չի բողոքարկել Շրջանային դատարանի որոշումը, որով վերջինս մերժել է դիմողի բացարկը՝ փորձագետի կողմնակալության հիմքով: Փորձաքննության ենթադրյալ թերի լինելու կապակցությամբ Կառավարությունը պնդել է, որ Դաշնային սահմանադրական դատարանում լսումների ժամանակ դիմողն այդ հարցին անդրադարձել է ոչ թե օրենքով նախատեսված ժամկետում, այլ միայն այդ ժամկետը լրանալուց հետո ներկայացրած նյութերում: Ի վերջո, դիմողի

առարկություններն ընդդեմ կույր դատավորի մասնակցությանը, պետք է բարձրացվեն Շրջանային դատարանի վարույթում:

43. Ինչպես Դատարանն արդեն առիթ է ունեցել նկատելու (տես՝ Կ.-ն և Տ.-ն ընդդեմ Ֆինլանդիայի, թիվ 25702/94, կետեր 141 և 147, ECHR 2001-VII, Գյուստաֆսոնն ընդդեմ Շվեդիայի, 1996թ. ապրիլի 25-ի վճիռը, Վճիռների եւ որոշումների ժողովածու 1996 -II, էջեր 654-55, կետեր 47 և 51, Կրուզ Վարասը և այլոք ընդդեմ Շվեդիայի, 1991թ. մարտի 20-ի վճիռը, Շարքեր Ա. 201, էջ 30, կետ 76), Կոնվենցիայի հիման վրա դիմողի գանգատների հանգամանքները պարզելու նպատակով Դատարանն անկաշկանդ է ցանկացած լրացուցիչ տեղեկություն եւ նոր փաստարկներ հաշվի առնելու հարցում: Մասնավորապես, որևէ արգելք չկա Մեծ պալատի համար քննության առնելու «նոր» նյութ, որը վերաբերում է Պալատի կողմից ընդունելի հայտարարված գանգատի հիմքում ընկած փաստերի մանրամասներին կամ այդ փաստերին առնչվող իրավաբանական փաստարկներին (տես՝ ՄաքՄայքլն ընդդեմ Մեծ Բրիտանիայի, 1995թ. փետրվարի 24-ի վճիռը, Շարքեր 307-B, էջ 51, կետ 73):

44. Սույն գործում շրջանային դատարանում լսումներին կույր դատավորի մասնակցության հարցը դիմողն առաջին անգամ բարձրացրել է Մեծ պալատի առջեւ: Դատարանը գտել է, որ այս գանգատի հիմքում ընկած է փաստական նոր տարր, որը տարբերվում է նրանցից, որոնք ընկած են դիմողի՝ Կոնվենցիայի 8-րդ և 14-րդ հոդվածների հիման վրա ներկայացրած եւ ընդունելի ճանաչված գանգատների հիմքում: Ուստի դա չէր կարող հաշվի առնվել սույն գործի ըստ էության քննության ժամանակ:

45. Կառավարության հետագա երկու փաստարկների կապակցությամբ Դատարանի կանոնակարգի 55-րդ կանոնը նախատեսում է, որ Պատասխանող մասնակից պետությունը անընդունելիության վերաբերյալ ցանկացած պահանջ պետք է բարձրացնի՝ դիմումի ընդունելիությանը վերաբերող իր գրավոր կամ բանավոր հիմնավորումներում (տես՝ Ն. Ս.-ն ընդդեմ Իտալիայի, թիվ 24952/94, կետ 44, ECHR 2002-X): Սույն գործում ընդունելիության հարցի լուծման փուլում Կառավարության կողմից ընդունելիության առնչությամբ որևէ գրավոր կամ բանավոր բացատրություն չի ներկայացվել՝ հիմնված այս փաստարկների վրա: Այդ կապակցությամբ, Դատարանը նշել է, որ հոգեբան-փորձագետի վերաբերյալ դիմողի քննադատությունը և կանխակալ կարծիքի համար փորձագետին բացարկելու նրա մերժված միջնորդությունն արդեն իսկ պարունակվել են սույն գործի ընդունելիության հարցի քննության ընթացքում ներկայացված նյութերում: Որևէ առանձնահատուկ պատճառ չկա, որը Կառավարությանը խոչընդոտի

ընդունելիության վարույթում համապատասխան պահին նախնական առարկություն ներկայացնելուն:

46. Հետևաբար, Կառավարության առարկությունների մնացյալ մասը պետք է մերժվի:

## **II. Կոնվենցիայի 8-րդ հոդվածի ենթադրյալ խախտում**

47. Ինչպես Պալատի առջև, դիմողը պնդել է, որ գերմանական դատարանների որոշումները, մերժելով արտամուսնական կապից ծնված իր երեխայի հետ շփվելու իրավունքի վերաբերյալ իր պահանջը, խախտել են Կոնվենցիայի 8-րդ հոդվածը, որի համապատասխան մասը նախատեսում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր ընտանեկան կյանքի... հարգման իրավունք...

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այն իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով եւ անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում ... առողջության կամ բարոյականության, կամ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար»:

48. Կառավարությունը խնդրել է Դատարանին այդ դրույթի որևէ խախտում չարձանագրել:

### **A. Եղե՞լ է, արդյոք, միջամտություն**

49. Կողմերը համաձայնել են, որ դիմողին՝ երեխայի հետ շփումն արգելելը միջամտություն է նրա՝ ընտանեկան կյանքը հարգելու իրավունքին, ինչպես երաշխավորված է 8 հոդվածի 1-ին կետով: Դատարանը միեւնույն տեսակետին է:

50. Ցանկացած նման միջամտություն այդ հոդվածի խախտում է, եթե դա տեղի չի ունենում «օրենքին համապատասխան», չի հետապնդում 8 հոդվածի 2-րդ կետով նախատեսված իրավաչափ նպատակ և չի կարող գնահատվել որպես «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»:

### **B. Արդարացված է եղել, արդյո՞ք, այդ միջամտությունը**

51. Կողմերը չեն վիճարկում Պալատի եզրահանգումն առ այն, որ խնդրո առարկա որոշումներն ունեցել են օրենսդրական հիմք, այն է՝ ներպետական օրենսդրության, մասնավորապես՝ Քաղաքացիական օրենսգրքի 1711 հոդվածի 2-

րդ կետը, այդ որոշումներն ուղղված են եղել երեխայի «առողջության և բարքերի», «իրավունքների և ազատությունների» պաշտպանությանը, որոնք՝ 8 հոդվածի 2-րդ կետի իմաստով հանդիսանում են իրավաչափ նպատակներ:

52. Ուստի մնում է քննարկել, թե արդյոք շփման իրավունքի մերժումը համարվում է «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»:

## **I. Պալատի վճիռը**

53. 2001թ. հոկտեմբերի 11-ի իր վճռում Պալատը գտել է, որ դիմողին երեխայի հետ շփման իրավունք տրամադրելու վերաբերյալ հայցը մերժելու համար իրոք եղել են ողջամիտ պատճառներ, մասնավորապես այն, որ ծնողների միջև առկա կոնֆլիկտների պարագայում երեխայի հետ շփումը չէր բխի երեխայի շահերից (կետեր 43-44):

54. Անդրադառնալով 8 հոդվածի 2-րդ կետին բնորոշ ընթացակարգային պահանջներին՝ Պալատը քննության է առել գերմանական դատարանների տրամադրության տակ եղած նյութերը, մասնավորապես՝ փորձագետի եզրակացությունը: Այն գտել է, որ երեխային դատարան չհրավիրելու փաստն առաջացրել է դիմողի շահերի ոչ լիարժեք պաշտպանության իրավիճակ (կետեր 45-48): Պալատը եզրակացրել է, որ նման հանգամանքներում ներպետական իշխանություններն անցել են գնահատման իրենց սահմանները՝ դրանով խախտելով դիմողի՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքը (կետ 49):

## **2. Կողմերի փաստարկները**

### **(a) Դիմողը**

55. Դիմողը հայտարարել է, որ գնահատելով գործի բոլոր հանգամանքները, գտնում է, որ ներպետական իշխանությունները խախտել են գնահատման սահմանները, քանի որ ինքը ոչ բավարար չափով է ներգրավված եղել որոշման կայացման գործընթացին:

56. Նա պնդել է, որ փորձագետը պաշտպանել է մոր դիրքորոշումը: Այդ իսկ պատճառով նա բացարկ է հայտնել մինչև փորձագետի կողմից եզրակացություն կազմելը, խնդրելով վերջինիս փոխարինել մեկ այլ փորձագետով: Դիմողը պնդել է, որ շփման իրավունքի տրամադրման գործով վարույթում ներգրավված

փորձագետը մանկական մասնագետ չի եղել: Փորձագետի եզրակացությունում առկա են եղել բազում մեթոդաբանական սխալներ, մասնավորապես՝ չի եղել որևէ տվյալ երեխայի և ծնողների միջև փոխհարաբերությունների մասին: Բացի դրանից, փորձագետը երեխային որևէ հարց չի տվել նրա և հոր փոխհարաբերությունների մասին:

57. Դիմողն ընդունել է Պալատի այն դիրքորոշումը, որ գործի լուծման համար անհրաժեշտ նախապայման էր հանդիսանում հոր մասին երեխայի կարծիքի ճշտումը: Դիմողը նաև կիսել է Պալատի այն կարծիքը, որ Շրջանային դատարանը չպետք է որոշում կայացնելիս բավարարվեր փորձագետի կցկտուր հիմնավորումներով, թե, իբր, երեխային հոր մասին հարցեր տալով՝ վտանգի կենթարկեր երեխայի հոգեկան անդորրը:

### **(b) Կառավարությունը**

58. Կառավարությունը պնդել է, որ Պալատը, Կոնվենցիայի 8-րդ հոդվածի հիման վրա կիրառելով անհրաժեշտության թեստը, վերազանցել է իր վերահսկողական լիազորությունները եւ ներպետական դատարանների գնահատականը փոխարինել է իր սեփական գնահատականով:

59. Տվյալ դեպքում գերմանական դատարանները դիմողին բավարար չափով ներգրավել են որոշման կայացման գործընթացին և լիարժեքորեն հաշվի առել նրա շահերը:

60. Մասնավորապես, դատարաններն իրենց որոշումները կայացնելիս հիմք են ընդունել ոչ միայն մոր խոսքերը, այլ նաև ականատեսների վկայությունները, որոնց համաձայն մայրն ամեն կերպ խոչընդոտել է երեխայի հոր հետ շփմանը՝ միայն մեծ սեր տածելու և հոգաձություն ցուցաբերելու պատճառով: Բացի դրանից, շրջանային դատարանը հիմք է ընդունել նաև փորձագետի մասնագիտական եզրակացությունը, որը լուրջ աշխատանք է տարել՝ զրուցելով երեխայի, մոր և դիմողի հետ, նա նաև հետևել է երեխայի վարքագծին՝ մոր բացակայությամբ եւ երեխայի հետ նայել է ընտանեկան ալբոմը՝ դիմողի եւ երեխայի միջև հարաբերությունները բացահայտելու նպատակով:

61. Ըստ Կառավարության կարծիքի՝ ոչինչ չի վկայում, որ ուղղակի հարցադրումներն ավելի նպատակահարմար կլինեին: Փորձագետը գտել է, որ չհիշատակելով հոր մասին, չանդրադառնալով նրան՝ երեխան զսպել է իր

հիշողությունները և փորձել պաշտպանել իրեն: Հարցերի միջոցով դրանց թարմացումը միայն վնասակար կլիներ երեխայի համար:

62. Բացի դրանից, Շրջանային դատարանն անց է կացրել բանավոր լսումներ դիմողի, երեխայի մոր եւ փորձագետի ներկայությամբ: Շրջանային դատարանը քննարկել է 5-ամյա երեխային լսելու հնարավորությունը եւ այդ նպատակով խորհրդակցել փորձագետի հետ, որը հիմնավոր կերպով բացատրել է, որ երեխայի հարցաքննությունը մեղքի զգացում կառաջացնի երեխայի մոտ, քանի դեռ ծնողները գտնվում են կոնֆլիկտների մեջ:

63. Ըստ Կառավարության՝ Պալատը ճիշտ չէ այն գնահատականում, թե փորձագետն իրականացրել է «թերի» աշխատանք և չի կիրառել մասնագիտական բոլոր մեթոդներն ու միջոցները:

### **3. Դատարանի գնահատականը**

64. Որոշելու համար, թե արդյոք շփման մերժումն «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում», Դատարանը քննարկել է այս միջամտությունն արդարացնող պատճառները եւ արդյոք դրանք բավարար են Կոնվենցիայի 8 հոդվածի 2-րդ կետի նպատակների համար: Անկասկած, այն հարցը, թե ինչն է բխում երեխայի լավագույն շահերից, էական նշանակություն ունի նմանատիպ դեպքերում: Ավելին, պետք է հիշել, որ ներպետական դատարաններն ավելի շահեկան դիրքում են գտնվում, քանի որ հնարավորություն ունեն շփվելու գործին առնչվող բոլոր անձանց հետ: Ուստի Դատարանի խնդիրն է ոչ թե փոխարինել ներպետական դատարաններին՝ խնամակալությանն հետ առնչվող գործերում իրենց պարտականությունները կատարելիս, այլ Կոնվենցիայի հիման վրա վերահսկել գնահատման իրավասությունն իրականացնելիս ներպետական դատարանների ընդունած որոշումները՝ (տես Հոկանենն ընդդեմ Ֆինլանդիայի գործով վճիռը, 1994թ. սեպտեմբերի 23, Շարքեր Ա. 299-Ա, էջ 20, կետ 55, Կուտզներն ընդդեմ Գերմանիայի վճիռը, թիվ 46544/99, կետեր 65-66, ECHR 2002-1, տես նաեւ Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա, կետեր 39-41):

65. Իրավասու ներպետական մարմիններին վերապահված գնահատման շրջանակը կարող է տարբերվել խնդրո առարկայի բնույթին եւ շահերի կարելորությանը համապատասխան: Այսպիսով, Դատարանը ճանաչել, որ իշխանություններն օգտվում են գնահատման լայն շրջանակից, երբ խոսքը

վերաբերում է խնամակալության հարցերին: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է խիստ հսկողություն իրականացնել ծնողական իրավունքների սահմանափակումների նկատմամբ: Այդ իրավունքների հետագա սահմանափակումները հղի են մեծ վտանգով՝ առ այն, որ երեխայի եւ ծնողի միջեւ կապը կարող է խզվել (տես Էլսհոլզն ընդդեմ Գերմանիայի գործով վճիռը, թիվ 25735/94, կետ 49, ECHR 2000-VIII, եւ վերոնշյալ Կուտզներն ընդդեմ Գերմանիայի վճիռը, կետ 67):

66. 8-րդ հոդվածը պահանջում է, որպեսզի ապահովվի հավասարակշռություն երեխայի եւ ծնողների շահերի միջեւ, եւ այդ հավասարակշռման գործընթացում առանձնակի կարեւորություն պետք է վերապահել երեխայի շահերին, որոնք, կախված դրանց բնույթից եւ շրջանակներից, կարող են գերակայել ծնողների շահերի նկատմամբ: 8-րդ հոդվածի համաձայն՝ ծնողին չի կարող տրամադրվել այնպիսի լիազորություններ, որոնք որևէ կերպ կվնասեն երեխայի առողջությանն ու զարգացմանը:

67. Տվյալ դեպքում գերմանական դատարաններն արդարացնում են շփման իրավունքի սահմանափակումը՝ պայմանավորված երեխայի ծնողների միջև լարված փոխհարաբերություններով, այսինքն՝ այդ փոխհարաբերությունների պարագայում որևէ հանդիպում ու շփում կարող էր գերլարում ստեղծել երեխայի համար (տես վերը՝ կետեր 16 և 26): Այդ ընթացքում, ծնողների միջեւ ձեռք բերված համաձայնության մաս կազմող ընտանեկան թերապիայի փորձը ձախողվել էր: Նման հանգամանքներում որոշումներ կարող էին կայացվել երեխայի շահերին համապատասխան (տես Բուսենին ընդդեմ Իտալիայի գործով վճիռը, թիվ 29569/95, կետ 55, ECHR 1999-VI): Այս հարցում Մեծ Պալատը կիսում է Պալատի տեսակետը (տես Պալատի վճիռի կետ 43):

68. Դատարանը գտել է, որ նշված պատճառները բավարար չեն գնահատելու համար, թե արդյոք դրանք «արդարացված» են 8 հոդվածի 2-րդ կետի նպատակների համար (տես Վ.-ն ընդդեմ Մեծ Բրիտանիայի, 1987թ. հուլիսի 8-ի վճիռը, Շարք 121, էջ 28-29, կետ 64, Էլսհոլզի վճիռը, կետ 52, և Տ. Պ.-ն ընդդեմ Մեծ Բրիտանիայի գործով վճիռը, կետ 72):

69. Պալատը եզրակացրել է, որ ներպետական իշխանությունները գերազանցել են գնահատման սահմանները՝ դրանով իսկ խախտելով դիմողի՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքները: Իր վճռում Պալատը վկայակոչել է մարզային եւ շրջանային դատարաններին ներկայացված ապացույցները եւ շարունակել է.

«46. Դատարանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ դատաքննության ոչ մի փուլում երեխային չեն լսել:

Շրջանային դատարանը պարզաբանումներ է ցանկացել ստանալ փորձագետից առ այն, թե ինչպիսի հոգեբանական լարվածություն կլինի երեխայի համար դատարանում հանդես գալը: Փորձագետը բացատրել է, որ ինքն ուղղակիորեն երեխային հոր վերաբերյալ հարցեր չի տվել: Փորձագետի կարծիքով ծնողների միջև առկա կոնֆլիկտի պայմաններում երեխային ծնողների հարաբերությունների վերաբերյալ դատարանում հարցաքննելը կարող էր հանգեցնել նրան, որ երեխայի մոտ առաջանար տպավորություն առ այն, որ իր պատասխանները կարող են վճռորոշ լինել: Շրջանային դատարանը, փորձագետի կարծիքն անվերապահորեն ընդունելով, խուսափել է երեխային լսելուց, գտնելով, որ իրոք դա նրա համար մեծ հոգեբանական լարվածություն կառաջացնի:

47. Ըստ դատարանի կարծիքի՝ գերմանական դատարանների կողմից երեխային չլսելու հանգամանքը վկայում է այն մասին, որ լիարժեք չեն ներկայացվել դիմողի շահերը: Հարկ էր, որպեսզի իրավասու դատարաններն առավել ուշադիր լինեին այն ամենի նկատմամբ, ինչը բխում էր երեխայի լավագույն շահերից՝ երեխայի հետ ուղղակի շփում հաստատելուց հետո: Շրջանային դատարանը չպետք է բավարարվեր փորձագետի անորոշ հայտարարություններով առ այն, թե երեխայի հարցաքննությունը մեծ վտանգի գործոն է պարունակում, նույնիսկ չփորձելով քննարկել երեխայի տարիքով պայմանավորված՝ հատուկ մեթոդներ կիրառելու հնարավորությունը:

48. Դատարանն այս համատեքստում մեծ նշանակություն է տվել այն փաստին, որ ինչպես հայտարարել էր փորձագետը, նա անձամբ ոչինչ չի հարցրել երեխային հոր մասին: Հորը երեխայի հետ շփման իրավունք տրամադրելու հարցը լուծելիս՝ անհրաժեշտ նախապայման է հոր առնչությամբ երեխայի կարծիքն ու ցանկությունները հաշվի առնելը, որպեսզի հնարավոր լիներ ապահովել արդարացի հավասարակշռություն բախվող շահերի միջև»:

70. Մեծ պալատը գտել է, որ յուրաքանչյուր դեպքում յուրովի է գնահատվում, թե որոշում կայացնելիս արդյոք լիարժեք են պաշտպանվել կողմերի շահերը:

71. Մարզային ու Շրջանային դատարաններում գործի լսումների ժամանակ դիմողն ունեցել է բոլոր հնարավորություններն ինչպես ցանկացած փաստարկ հօգուտ իրեն ներկայացնելու, այնպես էլ հասու լինելու այն ողջ տեղեկատվությանը, որի վրա դատարանը հիմնվել է (*mutatis mutandis*, Տ.Պ-ն. եւ Կ.Ս.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության, կետեր 78-83, եւ Պ.Կ.-ն եւ Ս.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության, 56547/00, կետեր 136-38 ECHR 2002-VI):

72. Մարզային դատարանի համար հիմք են հանդիսացել ծնողների հայտարարությունները, երեխայի մանկապարտեզի աշխատակիցների հայտարարությունները եւ Անչափահասների հարցերով գրասենյակի աշխատակիցների ցուցմունքները (տես վերը՝ կետ 15): Շրջանային դատարանը հարցրել է

փորձագետի կարծիքը, թե արդյոք երեխայի հետ շփումը բխում է երեխայի լավագույն շահերից: Այդ կարծիքի հիման վրա որոշել է երեխային դատարանում չհարցաքննել (տես կետեր 18, 22-23): Փորձագետն իր կարծիքը ներկայացրել է դիմողին, երեխային եւ երեխայի մորը հանդիպելուց հետո:

73. Երեխային դատարանում լսելու խնդրի կապակցությամբ Դատարանը գտել է, որ, որպես կանոն, ներպետական դատարանների խնդիրն է իրենց ներկայացված ապացույցների գնահատումը, ներառյալ համապատասխան փաստաթղթերն օգտագործելու համար միջոցները /տես Վիդալն ընդդեմ Բելգիայի գործով 1992թ. ապրիլի 22-ի վճիռը, Շարքեր Ա, 235-Բ, էջեր 32-33, կետ 33/: Չափազանց կլիներ ասել, որ ներպետական դատարաններից միշտ պահանջվում է դատարանում լսել երեխային խնամքի հետ առնչվող գործերով, սակայն այս հարցը կախված է յուրաքանչյուր գործի հանգամանքներից, հաշվի առնելով տվյալ երեխայի տարիքը եւ հասունությունը:

74. Այդ կապակցությամբ Դատարանը ցանկացել է ուշադրություն հրավիրել այն փաստի վրա, որ առաջին լսումների ժամանակ երեխան եղել է 3 տարեկան 10 ամսական, իսկ Շրջանային դատարանում լսումների ժամանակ՝ 5 տարեկան 2 ամսական: Փորձագետը զրուցելով երեխայի, մոր, հոր հետ, եզրակացրել է, որ երեխայի հետ շփման իրավունքը չի բխում երեխայի շահերից, քանի դեռ չեն հաղթահարվել ծնողների միջեւ կոնֆլիկտները: Ինչ վերաբերում է դատարանում երեխային լսելուն, փորձագետը բացատրել է, որ երեխայի հարցաքննությունը վտանգ կներկայացնի վերջինիս համար, եւ այդ վտանգը չի կարող հաղթահարվել որեւէ հատուկ մեթոդի կիրառմամբ:

75. Քննության առնելով փորձագետի կողմից երեխայի հետ հանդիպման ժամանակ կիրառված մեթոդները եւ նրա զգուշավոր մոտեցումը հարցին Դատարանը գտել է, որ Շրջանային դատարանը, հիմնվելով փորձագետի եզրակացությունների վրա, չի գերազանցել գնահատման իր շրջանակները, նույնիսկ դիմողի վերաբերյալ երեխային կոնկրետ հարցադրումներ չառնելու պարագայում:

76. Տվյալ համատեքստում Դատարանը նշել է, որ Շրջանային դատարանում դատավարության ընթացքում դիմողի կողմից փորձագետին ներկայացված բացարկը մերժվել է եւ դիմողը քննադատել է նրա կողմից կիրառված գիտական մոտեցումը: Դիմողն այս փաստարկներն օգտագործում է ներկա դատավարությունում, սակայն Դատարանը որեւէ հիմք չունի

կասկածի տակ առնելու փորձագետի կարողությունները կամ այն միջոցները, որով նա հարցաքննել է երեխային:

77. Դատարանը, հաշվի առնելով վերոհիշյալը եւ պատասխանող պետության գնահատման սահմանները, գտել է, որ գերմանական դատարանների դատավարական մոտեցումը եղել է ողջամիտ եւ ձեռք են բերվել բավարար նյութեր ու ապացույցներ, որպեսզի կայացվի գործով փաստարկված վճիռ: Դատարանը, ուստի կարող է ընդունել, որ պահպանվել են Կոնվենցիայի 8-րդ հոդվածից բխող ընթացակարգային պահանջները:

78. Ուստի տվյալ դեպքում տեղի չի ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

### **III. Կոնվենցիայի 14-րդ հոդվածի՝ 8-րդ հոդվածի հետ համակցված, ենթադրյալ խախտում**

79. Դիմողը գանգատարկել է առ այն, որ դարձել է խտրական վերաբերմունքի զոհ՝ ի խախտումն Կոնվենցիայի 14-րդ հոդվածի՝ 8-րդ հոդվածի հետ համակցված:

Կոնվենցիայի 14-րդ հոդվածը նախատեսում է.

«Սույն Կոնվենցիայում իրավունքներից և ազատություններից օգտվելն ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից»:

#### **1. Պալատի կարծիքը**

80. Պալատը գտել է, որ գերմանական օրենսդրության համաձայն արտամուսնական կապից ծնված երեխայի հոր իրավունքները՝ կապված խնամակալության, շփման հետ, ավելի նվազ բարենպաստ սահմաններում են, քան ամուսնալուծված հոր նույնաբնույթ իրավունքները: Այս կապակցությամբ Պալատը նկատել է, որ, ի տարբերություն ամուսնալուծված հոր, արտամուսնական կապից ծնված երեխայի հայրը չունի երեխայի հետ շփման իրավունք, եւ մոր առարկությունն այդ շփմանը կարող է հաղթահարվել միայն դատարանի կողմից, եթե այդպիսի շփումը բխում է երեխայի շահերից: Ըստ Պալատի՝ առանցքային հարցը կայանում է նրանում,

որ դատարանները երեխայի եւ հոր միջեւ շփումը չեն համարել երեխայի շահերից բխող, այլ վճռորոշ գործոն են համարել մոր բացասական վերաբերմունքը եւ ծնողների միջեւ առկա լարված դրությունը /կետեր 54-55/:

81. Ինչ առնչվում է վերաբերմունքի տարբերության արդարացմանը, Պալատը, նկատի ունենալով գործի յուրահատուկ հանգամանքները, համոզիչ չի համարել Կառավարության փաստարկը, ըստ որի՝ արտամուսնական կապից ծնված երեխաների հայրերը շահագրգռված չեն երեխաների հետ շփման հարցում եւ ցանկացած ժամանակ կարող են խզել արտամուսնական հարաբերությունները, և եզրակացրել է, որ եղել է Կոնվենցիայի 14-րդ հոդվածի՝ 8-րդ հոդվածի (կետեր 56-61) հետ համակցված, խախտում:

## **2. Կողմերի փաստարկները**

### **(a) Դիմողը**

82. Դիմողն ընդգծել է, որ, համաձայն նախկին օրենսդրության, մայրը հնարավորություն է ունեցել մերժելու արտամուսնական կապից ծնված իր երեխայի հետ հոր որևէ շփում: Թեև Շրջանային դատարանը գտել էր, որ դիմողը խնդրել էր շփվելու իրավունք՝ հիմնվելով իր դստեր հանդեպ տածած անկեղծ սիրո վրա, այն վճռորոշ գործոն է համարել մոր ցանկությունը եւ նրա վերաբերմունքը հոր նկատմամբ: Էական հանգամանքն այն է, որ ներպետական դատարաններն արտամուսնական կապից ծնված երեխայի և հոր միջև սերտ կապը չեն գնահատել նախևառաջ որպես ի շահ երեխայի: Մոր բացասական վերաբերմունքը և կոնֆլիկտային իրավիճակում ծնողների միջև անխուսափելի լարված հարաբերությունները, չնայած հոր պատասխանատու դրդապատճառներին, վճռորոշ են եղել շփման իրավունքից զրկելու համար: Այդպիսի իրավիճակում հիմքեր կան եզրակացնելու, որ երեխայի հոր նկատմամբ խնդրո առարկա դատավարությունում դրսևորվել է նվազ բարենպաստ վերաբերմունք, քան դրսևորվում է ամուսնալուծված հոր նկատմամբ: Նրա կարծիքով, վերաբերմունքի համար որևէ օբյեկտիվ պատճառ չի եղել:

### **(b) Կառավարությունը**

83. Կառավարությունը պնդել է, որ անցյալում արտամուսնական կապից ծնված երեխաների հայրերը հաճախ որևէ հետաքրքրություն չէին

ցուցաբերում իրենց երեխաների նկատմամբ: Քաղաքացիական օրենսգրքի 1711 հոդվածի 2-րդ կետն այդ առումով չի գնահատվել որպես խտրական (տես՝ Գլեյշոֆն ընդդեմ Գերմանիայի, թիվ 9530/81, Հանձնաժողովի 1984թ. մայիսի 14-ի որոշումը): Գերմանական օրենսդիր մարմինն արձագանքել է սոցիալական հարաբերությունների վերջին փոփոխություններին՝ 1997թ. դեկտեմբերին ընդունելով ընտանեկան նոր օրենսգիրք: Չնայած այդ բարեփոխմանը, Քաղաքացիական օրենսգրքի 1711 հոդվածը եղել է համատեղելի Կոնվենցիայի հետ:

84. Ամեն դեպքում, ինչպես էլսիոլգի գործում (վճիռը մեջբերված է վերը՝ 59-61 կետեր), դիմողի գործում 1711 հոդվածի կիրառումը խտրականություն չի հանդիսացել: Այդ կապակցությամբ, Կառավարությունը հիշեցրել է շրջանային դատարանի վճիռը, որ միայն հիմնավոր դրդապատճառները չեն կարող արդարացնել երեխայի հետ տեսակցության իրավունքը, եթե երեխան կտուժի ծնողների միջև գոյություն ունեցող լարված հարաբերություններից շփման յուրաքանչյուր դեպքում, որը կխաթարի նրա հետագա զարգացումը: Հետևաբար, Շրջանային դատարանն իր որոշումը խարսխել է ոչ միայն այն հիմքի վրա, որ շփումը չի կարող նպաստել երեխայի բարեկեցությանը, այլ ավելի լուրջ պատճառի վրա, որ այն անհամատեղելի է եղել երեխայի բարեկեցության հետ:

### **3. Դատարանի գնահատականը**

85. Կոնվենցիայի 14-րդ հոդվածը միայն լրացնում է Կոնվենցիայի և դրա արձանագրությունների այլ նյութական դրույթները: Այն չունի անկախ գոյություն եւ գործում է միայն նյութական դրույթներով պաշտպանվող իրավունքների և ազատությունների հետ կապի մեջ: Այնուամենայնիվ, 14-րդ հոդվածի կիրառումը չի ենթադրում մեկ կամ ավելի նման դրույթների խախտում, և այս առումով այդ հոդվածն ինքնավար է, 14-րդ հոդվածի կիրառման համար բավական է, որ գործի փաստերը վերաբերեն Կոնվենցիայի կամ դրա Արձանագրությունների մեկ այլ նյութական դրույթի (տես ի թիվս այլ վճիռների՝ Աբդուլազիզը, Ինտրիզը և Բալկանդալին ընդդեմ Մեծ Բրիտանիայի գործով 1985թ. մայիսի 28-ի վճիռը, Շարք Ա, թիվ 94, էջ 32, կետ 22):

Դատարանը գտել է, որ սույն գործի փաստերը Կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակում են եւ, հետեւաբար, Կոնվենցիայի 14-րդ հոդվածի դրույթները կիրառելի են (տես վերը՝ կետ 49):

86. Ամուսնությունից ծնված երեխաների՝ ամուսնալուծված հայրերի հետ համեմատած՝ արտամուսնական կապից ծնված երեխաների հայրերի վիճակի կապակցությամբ Դատարանը գտել է, որ խնդրո առարկա ժամանակահատվածում գերմանական Քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները, այն է՝ օրինական ամուսնությունից ծնված երեխաների նկատմամբ խնամք չիրականացնող հայրերին վերաբերող 1634 հոդվածի 1-ին կետը և արտամուսնական կապից ծնված երեխաների հայրերին վերաբերող 1711 հոդվածի 2-րդ կետը, պարունակում էին տարբեր չափորոշիչներ (տես վերը՝ կետեր 33-34): Առաջին կատեգորիայի ծնողն ուներ երեխայի հետ շփման օրինական իրավունք, որը կարող էր սահմանափակվել կամ դադարեցվել, եթե անհրաժեշտ էր ի շահ երեխայի, մինչդեռ երկրորդ դեպքում ծնողի շփումը երեխայի հետ կախված էր երեխայի մոր բարենպաստ դիրքորոշումից կամ դատարանի որոշումից, որը գտնում է, որ այդպիսի սերտ կապը բխում է երեխայի շահերից:

87. Անհատական դիմումի արդյունք հանդիսացած այդ գործերում, սակայն, Դատարանի խնդիրը չէ ուսումնասիրել ներպետական օրենսդրությունը՝ վերացական ձևով, այլ պետք է ուսումնասիրի, թե ինչպես է տվյալ օրենսդրությունը կոնկրետ հանգամանքներում կիրառվել տվյալ անձի նկատմամբ: Ուստի Դատարանն անհրաժեշտ չի համարել ուսումնասիրել, թե արդյոք նախկին գերմանական օրենսդրությունը՝ որպես այդպիսին, այն է՝ Քաղաքացիական օրենսգրքի 1711 հոդվածի 2-րդ կետը չարդարացված տարբերակում է կատարում արտամուսնական կապից ծնված երեխաների հայրերի և ամուսնալուծված հայրերի միջև՝ Կոնվենցիայի 14-րդ հոդվածի իմաստով: Դատարանի լուծելիք հարցն է՝ թե արդյոք սույն գործում Քաղաքացիական օրենսգրքի 1711 հոդվածի 2-րդ կետի կիրառումը հանգեցրել է դիմողի նկատմամբ չարդարացված խտրական վերաբերմունքի՝ ամուսնալուծված զույգի համեմատությամբ (Էլսհոլզի վճիռը, մեջբերված վերը՝ կետ 59):

88. Պալատը եզրակացրել է, որ գերմանական դատարանները խտրական մոտեցում են ցուցաբերել դիմողի նկատմամբ: Պալատն իր վճիռը հիմնավորել է հետևյալ կերպ.

«55. Սույն դեպքի նկատմամբ գերմանական դատարանների ցուցաբերած մոտեցումն այն օրենսդրության արտացոլումն է, որը, ի տարբերություն ամուսնալուծված հայրերի,

արտամուսնական կապից ծնված երեխաների հայրերին դնում է ավելի նվազ նպաստավոր վիճակում: Ի տարբերություն ամուսնալուծված հայրերի, արտամուսնական կապից ծնված երեխաների հայրերը չեն ունեցել իրենց երեխաների հետ շփման ոչ մի իրավունք, և շփվելու հարցում՝ մոր մերժումը կարող էր հաղթահարվել միայն դատարանի կողմից, երբ շփումն ի շահ երեխայի է: Ակնհայտ էր, որ այդպիսի կանոնների դեպքում և նման հանգամանքներում արտամուսնական կապից ծնված երեխայի հոր համար ստեղծվում է ապացուցման դժվարին բեռ: Առանցքային պահն այն է, որ դատարանները երեխայի և հոր միջև սերտ կապը չեն գնահատել նախևառաջ որպես երեխայի շահերից բխող: Մոր բացասական վերաբերմունքը և ծնողների միջև անխուսափելի լարված հարաբերությունները՝ կոնֆլիկտային իրավիճակում, անկախ հոր պատասխանատու դրդապատճառներից, շփման իրավունքի մերժման համար լինելով վճռորոշ, հիմքեր կան եզրակացնելու, որ լսումների ընթացքում դիմողի նկատմամբ՝ որպես երեխայի հոր, դրսևորվել է նվազ բարենպաստ վերաբերմունք, քան ամուսնալուծված հոր նկատմամբ:

56. 14-րդ հոդվածի նպատակների համար՝ վերաբերմունքի տարբերությունը հանդիսանում է խտրական, եթե այն չունի որևէ օբյեկտիվ և ողջամիտ արդարացում, այն է՝ եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, կամ եթե կիրառվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համամասնության ողջամիտ հարաբերակցություն: Բացի դրանից, Պայմանավորվող պետությունն օգտվում է գնահատման որոշակի ազատությունից՝ որոշելով, թե արդյոք եւ ինչ ծավալով է նմանատիպ իրավիճակում կիրառվող տարբերակված մոտեցումն արդարացված (Լագերը և Բուրիմին ընդդեմ Նիդեռլանդների, 28369/95, կետ 57, ECHR 2000-X):

57. Համաձայն Դատարանի նախադեպային իրավունքի, պետք է խիստ ծանրակշիռ պատճառներ գործեն, որպեսզի ծագման հիմքով տարբերակված մոտեցումը համատեղելի լինի Կոնվենցիայի հետ (տես վերը մեջբերված Լագերը և Բուրիմին):

58. Սույն գործում Դատարանի համար համոզիչ չեն Կառավարության պարզաբանումները, որոնք հիմնվում են ընդհանուր դատողությունների վրա, որ արտամուսնությունից ծնված երեխաների հայրերը շահագրգռված չեն իրենց երեխաների հետ շփման հարցում և կարող են ցանկացած ժամանակ արտամուսնական կապերը խզել:

59. Այդպիսի դատողությունները կիրառելի չեն դիմողի նկատմամբ: Նա փաստորեն երեխայի ծնվելու ժամանակ՝ 1988թ. հունիսին, ապրել է երեխայի մոր հետ և կապեր է պահպանել նրա հետ մինչև 1990թ. հոկտեմբեր: Նա ընդունել է հայրությունը և ատճառներով: սկսել ալիմենտ վճարել: Եվ որ ամենակարևորն է՝ նաև շարունակել է ցուցաբերել կոնկրետ հետաքրքրություն նրա հետ շփվելիս՝ պայմանավորված անկեղծ դրդապատճառներով:

60. Կառավարությունն անկեղծորեն խոստովանել է, որ արտամուսնական ընտանիքների թիվն աճել է: Դիմողի գանգատի կապակցությամբ Շրջանային դատարանը հայտարարել է օրենսդրական անհապաղ բարեփոխման անհրաժեշտության մասին: Օրենսդրության սահմանադրականությունը վիճարկող գանգատները գտնվում են Դաշնային սահմանադրական դատարանի քննության ընթացքում: Ընտանեկան նոր օրենսդրությունը, վերջին հաշվով, ուժի մեջ է մտել 1998թ. հուլիսին:

Դատարանը ցանկացել է պարզաբանել, որ այդ փոփոխությունները չեն կարող ինքնին ցույց տալ, որ նախորդ նորմերը հակասել են Կոնվենցիային: Սակայն դրանք, իրոք, ցույց են տալիս, որ խնդրի առարկա օրենսդրության նպատակը, այն է՝ երեխաների ու նրանց ծնողների շահերի

պաշտպանությունը, հնարավոր է նաև ձեռք բերվել առանց ծննդյան հիմքով պայմանավորված տարբերության (տես՝ *mutatis mutandis*, Ինգեն ընդդեմ Ավստրիայի 1987թ. հոկտեմբերի 28-ի վճիռը, Շարք Ա, թիվ 126, էջ 19, կետ 44)»:

**89.** Մեծ պալատը գտել է, Կոնվենցիայի 8-րդ հոդվածի հիման վրա, որ գերմանական դատարանի որոշումները, մերժելով շփման իրավունքը, ընդունվել են ի շահ երեխայի: Այդ կապակցությամբ այն մատնանշել է դատարանների պատճառաբանությունները՝ հիմնված ծնողների միջև խիստ լարված հարաբերությունների, որոնց հաղորդակից էր երեխան, և այն վտանգի վրա, որ այցելությունները կազդեին երեխայի վրա և կմիջամտեին նրա բնականոն զարգացմանը: Դատարանը նաև գտել է, որ որոշում ընդունելու ընթացքն ապահովել է դիմողի շահերի անհրաժեշտ պաշտպանությունը:

90. Ուստի Դատարանը պետք է պարզի, թե արդյոք դիմողի ընտանեկան կյանքին միջամտությունը, որն ինքնին թույլատրելի է՝ համաձայն 8 հոդվածի 2-րդ կետի, կատարվել է խտրական միջոցով (տես՝ «Բելգիայի կրթության ոլորտում լեզուների օգտագործման վերաբերյալ օրենքների տեսակետների վերաբերյալ» գործով 1968թ. հուլիսի 23-ի վճիռը, Շարք Ա, թիվ 6, էջեր 33-34, կետ 9. Բելգիական ոստիկանության ազգային միությունն ընդդեմ Բելգիայի գործով 1975թ. հոկտեմբերի 27-ի վճիռը, Շարք Ա, թիվ 19, էջ 19, կետ 44. Ռեքվենիյն ընդդեմ Յունգարիայի GC, թիվ 25390/94, կետ 67, ECHR 1999-III. տես նաև՝ Արևելաաֆրիկյան ասիացիներն ընդդեմ Մեծ Բրիտանիայի, թիվ 4403/70 և շար., Հանձնաժողովի 1973թ. դեկտեմբերի 14-ի որոշումը և 78-A որոշումը, էջ 67, կետ 226):

**91.** Դատարանը համաձայն է Պալատի հետ, որ կան տարրեր, որոնցով սույն գործը տարբերվում են Էլսհոլզի գործից (մեջբերված վերը՝ կետեր 60-61): Այնտեղ Դատարանը նշել էր, որ այդ գործի փաստերի հիման վրա չի կարելի ասել, որ ամուսնալուծված հոր նկատմամբ վերաբերմունքն ավելի բարենպաստ էր: Այդ կապակցությամբ նա նշել է, որ գերմանական դատարանների որոշումները հստակորեն հիմնվել են երեխայի զարգացման համար վտանգի վրա, եթե նա պետք է, մոր ցանկությանը հակառակ, նորից վերականգնել շփումը դիմողի՝ իր հոր հետ: Բացի դրանից, Դաշնային սահմանադրական դատարանը հաստատել է, որ ընդհանուր իրավասության դատարանները կիրառել են նույն թեստը, ինչ կիրառել են ամուսնալուծված հոր նկատմամբ:

92. Սույն գործում, մոր կողմից դիմողի նկատմամբ խոր թշնամանքի և նրան առարկելու հետևանքով ակնհայտ կոնֆլիկտային իրավիճակում գերմանական դատարանները գտել են, որ Քաղաքացիական օրենսգրքի 1711 հոդվածի 2-րդ կետի համաձայն միայն առանձնահատուկ հանգամանքները կկարողանան արդարացնել այն ենթադրությունը, որ դիմողի հետ անձնական շփումը կարող է մշտապես օգտակար արդյունք ունենալ երեխայի բարեկեցության համար: Հաշվի առնելով այն փաստը, որ այդ դատարանները համոզված են եղել դիմողի պատասխանատու դրդապատճառների, երեխային նրա նվիրվածության եւ նրա անկեղծ զգացմունքների հարցում՝ նրանք հոր վրա դրել են ավելի ծանր բեռ, քան դրվում է ամուսնալուծված հայրերի վրա՝ համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 1634 հոդվածի 1-ին կետի: Դատարանը նաև ուշադրություն է հրավիրում, որ Շրջանային դատարանը, այն նույն ժամանակ, երբ արտամուսնությունից ծնված երեխաներին առնչվող օրենսդրության բարեփոխումները համարել է անհրաժեշտ, բացահայտորեն հայտարարել է, որ նա իրեն համարել է կաշկանդված 1711 հոդվածի 2-րդ կետով, որն արտամուսնությունից ծնված երեխաների հայրերին դրել է ավելի թույլ իրավական վիճակում:

93. Ինչպես հիմնավորապես սահմանված է Դատարանի նախադեպային իրավունքում, վերաբերմունքի տարբերությունը խտրականություն է համարվում 14-րդ հոդվածի նպատակների համար, եթե այն չունի որևէ օբյեկտիվ և ողջամիտ արդարացում, այն է՝ եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, կամ եթե կիրառվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համամասնության ողջամիտ հարաբերակցություն: Պայմանավորվող պետությունն օգտվում է գնահատման որոշակի ազատությունից՝ որոշելով, թե արդյոք եւ ինչ ծավալով է նմանատիպ իրավիճակում կիրառվող տարբերակված մոտեցումն արդարացված (տես վերը մեջբերված Աբդուլազիզը, Քաբալեսը և Բալկանդալին, էջեր 35-36, կետ 72):

94. Դատարանն արդեն նշել է, որ պետք է խիստ ծանրակշիռ պատճառներ գործեն, որպեսզի ծագման հիմքով տարբերակված մոտեցումը համատեղելի լինի Կոնվենցիայի հետ (տես՝ Մազուրեկն ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 34406/97, կետ 49, ECHR 2000-II, և Լագերն ու Բուրիմին ընդդեմ Նիդեռլանդների, թիվ 28369/95, կետեր 37-38, ECHR 2000-X): Նույնը ճիշտ է այն հարաբերություններում ծնված երեխայի հոր նկատմամբ վերաբերմունքի

տարբերության համար, որում արտամուսնական կապեր ունեցող կողմերն ապրել են համատեղ, ամուսնության վրա հիմնված հարաբերություններից ծնված երեխայի հոր հետ համեմատած:

95. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 14-րդ հոդվածի՝ 8-րդ հոդվածի հետ համակցված, խախտում:

#### **IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 14-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ**

**96.** Կոնվենցիայի 14-րդ հոդվածը երաշխավորում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրա Արձանագրության խախտում և եթե Կոնվենցիայի Բարձր պայմանավորվող կողմի ներպետական օրենսդրությունն ընձեռում է միայն մասնակի փոխհատուցման հնարավորություն, ապա Դատարանը, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի բավարարում է տրամադրում»:

##### **A. Վնասը**

**97.** Պալատի լսումների ժամանակ դիմողը պահանջել է 3.000.000 եվրո (EUR)՝ կրած նյութական եւ ոչ նյութական վնասի դիմաց: Պալատը տրամադրել է 50.000 գերմանական մարկ (DEM) (մոտավորապես 25.565 EUR)՝ որպես փոխհատուցում այն ոչ նյութական վնասների դիմաց, որը նա կրել է Կոնվենցիայի 8-րդ և 14-րդ հոդվածների խախտման արդյունքում, քանի որ նա ներպետական դատավարությունում կորցրել էր առնվազն իր շահերի երաշխավորման հնարավորությունը և եղել է ընթացակարգային թերացումների և խտրականության զոհ:

98. Մեծ պալատում լսումների ժամանակ դիմողը պահանջել է 150.000 EUR, պնդելով, որ Պալատի կողմից տրամադրված չափով գումարը համարժեք փոխհատուցում չէ այն տառապանքների դիմաց, որն ինքը կրել է ընկճվածության վիճակում, ինչն ազդել է իր արդյունավետ աշխատունակության վրա:

99. Կառավարությունը պնդել է, որ դիմողն ի վիճակի չի եղել ցույց տալու որևէ պատճառական կապ շփման իրավունքի մերժման և աշխատելու իր պիտանիության միջև: Ինչ վերաբերում է նախորդ վճիռներին, որոնք առնչվում էին շփման իրավունքին, Կառավարությունն առաջարկել է

35.000 DEM- 55.000 DEM (19895 EUR` 28120 EUR-ի ) ոչ նյութական վնասների փոխհատուցման համար:

100. Մեծ պալատը գտել է Կոնվենցիայի 14-րդ հոդվածի` 8-րդ հոդվածի հետ համակցված, խախտում, բայց ինքնին 8-րդ հոդվածի հիման վրա` ընտանեկան կյանքի հարգման նյութական իրավունքի խախտում` ոչ: Դիմողի նկատմամբ նրա ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի բավարարման հարցում խտրականությունը հնարավոր է, որ նրան պատճառել է անհանգստություն և ընկճվածություն, որը չի կարող ինքնին փոխհատուցվել խախտման փաստի ճանաչմամբ: Գնահատելով իրավահավասարության հիման վրա, Դատարանը դիմողին որպես փոխհատուցում տրամադրել է 20.000 EUR:

## **B. Ծախքերը և ծախսերը**

101. Պալատում լսումների ժամանակ դիմողը պահանջել է 13.046.17 DEM (մոտավորապես 6 670 EUR)` գերմանական դատարաններում կրած ծախքերի ու ծախսերի համար:

102. Պալատը, գտնելով, որ ծախքերի ու ծախսերի մի մասն է կատարվել փաստացի և անհրաժեշտորեն` շփման իրավունքին առնչվող լսումների համատեքստում, տրամադրել է 8.000 DEM (մոտավորապես 4.090EUR):

103. Մեծ պալատում լսումների ժամանակ դիմողը պահանջել է 5.731.73 EUR` 4.980.13 EUR-ն` գերմանական դատարաններում վարույթի առնչությամբ, և լրացուցիչ 751.60 EUR` դատական ծախքերի և թարգմանիչների ծառայությունների համար կրած ծախսերի դիմաց (251.60 EUR):

104. Կառավարությունն առարկել է` պնդելով, որ շփման իրավունքի առնչությամբ լսումներում կրած վնասների դիմաց դիմողի պահանջած գումարի ամբողջական չափը չափազանց մեծ է, մասնավորապես, որ նա ի վիճակի չի եղել ցույց տալու, որ այդ ծախսերը կրել է շփման իրավունքի առնչությամբ լսումների համար, եւ փաստաբանների հոնորարները գերազանցել են օրենքով նախատեսված սահմանները:

**105.** Ծախքերը և ծախսերը չեն տրամադրվի համաձայն 41-րդ հոդվածի, եթե չհաստատվի, որ դրանք դիմողը կատարել է փաստացի և անհրաժեշտորեն, և նաև ողջամիտ են քանակի առումով (տես` «Sunday

Times»-ն ընդդեմ Սեծ Բրիտանիայի (թիվ 1) (50-րդ հոդված), 1980թ. նոյեմբերի 6-ի վճիռը, Շարք Ա, թիվ 38, էջ 13, կետ 23): Բացի դրանից, դատական ծախքերը վերականգնելի են այնքանով, որքանով որ դրանք վերաբերում են բացահայտված խախտմանը (տես՝ Բեյելերն ընդդեմ Իտալիայի (միայն բավարարումը) {GC}, թիվ 33202/96, կետ 27, 28 մայիսի 2002թ.):

106. Դատարանը գտել է, որ խախտվել է Կոնվենցիայի 14-րդ հոդվածը՝ 8-րդ հոդվածին վերաբերող՝ դիմողի գանգատի առնչությամբ, գտնելով, որ գերմանական դատարաններում վարույթը եղել է խտրական: Իրավահավասարության հիմքերով նա դիմողին տրամադրել է 4500 EUR:

### **C. Տոկոսներ՝ չվճարման դեպքում**

107. Դատարանը գտել է, որ փոխհատուցման չվճարման դեպքում տոկոսադրույթը պետք է հիմնվի Եվրոպական կենտրոնական բանկի նվազագույն փոխարկային տոկոսադրույթի վրա, որին պետք է հավելել երեքտոկոս:

### **Այդ հիմքերով Դատարանը**

1. Վճռում է, միաձայն, որ գերմանական դատարաններում վարույթին մասնակից դատավորներից մեկի կուրության մասին դիմողի գանգատը չի կարող քննության առնվել,

2. Մերժում է, միաձայն, Կառավարության նախնական առարկության մնացած մասը,

3. Վճռում է, տասներկու ձայնով՝ ընդդեմ հինգի, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել,

4. Վճռում է, միաձայն, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 14-րդ հոդվածի՝ 8-րդ հոդվածի հետ համակցված խախտում,

5. Վճռում է, միաձայն,

(a) որ Պատասխանող պետությունը պետք է դիմողին երեք ամսվա ընթացքում վճարի հետևյալ գումարը, ավելացրած ցանկացած գումար, որը կարող է հարկվել,

(i) 20.000 EUR (քսան հազար եվրո)՝ կրած ոչ նյութական վնասի դիմաց,

(ii) 4.500 EUR (չորս հազար հինգ հարյուր եվրո)՝ ծախսերի ու ծախսերի դիմաց,

(b) վերոնշյալ եռամսյա ժամկետը լրանալուն պես՝ նշված գումարի չվճարման համար տոկոսադրույքը պետք է հիմնվի եվրոպական կենտրոնական բանկի՝ չվճարման ժամանակահատվածում նվազագույն փոխարկային տոկոսադրույքի վրա, որին պետք է հավելել երեքտոկոս:

6.Մերժում է, միաձայն, արդարացի բավարարման վերաբերյալ դիմողի պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերեն և ֆրանսերեն և հրապարակվել է Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում, 2003թ. հուլիսի 8-ին:

Լուիզիոս Վիլդհաբեր

Նախագահ

Պո Մահոնի

Քարտուղարի տեղակալ